ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2025Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՕՐ» ԵՎ «ՔԼԻԵՆԹ-ԹՐԵԺՐԻ» ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/13

ք. Երևան 03.03.2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «ԼՍՈՖՏ» ՍՊԸ-ն,ի դեմս տնօրեն Լ.Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2025թ. ընթացքում «Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի սպասարկման ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման և/կամ Պայմանագրի հավելված № 1-ի «լրացուցիչ պայմաններ»-ի 1-ին կետում նշված փաթեթի ամբողջականության խախտման կամ կորստի դեպքում՝ նաև համապատասխանաբար Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը, տուգանքը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման և/կամ Պայմանագրի հավելված № 1-ի «լրացուցիչ պայմաններ»-ի 1-ին կետում նշված փաթեթի ամբողջականության խախտման կամ կորստի դեպքում նաև համապատասխանաբար Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը, տուգանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 290,000,000 (երկու հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի հավելված 1-ի «լրացուցիչ պայմաններ»-ի 1-ին կետում նշված փաթեթի ամբողջականության խախտման կամ կորստի դեպքում Պատվիրատուն վճարում է Կատարողին տուգանք՝ վերջին 12 ամսվա սպասարկման գումարի 5-ապատիկի (հնգապատիկ) չափով՝ բացառությամբ Կատարողի գործունեության դադարեցման դեպքում:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականարտակարգությունը հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները տարածվում են 12.02.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապանի կողմից գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՈԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Բուզանդի փ. 1/3
ՀՎՀՀ՝ 02629081	շենք,7-րդ հարկ
Հ/Հ 900011017192	ՀՎՀՀ 01202055
ՖՆ գործառնական վարչություն	ՈՅունիբանկ» ԲԲԸ
ֆինանսական քարտուղարի պարտականությունները կատարող	Հ/Հ 24100023278500
	տնօրեն
----------Ս. Եսայան	----------Լ. Լալայան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

03.03.

Հավելված N 1
2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72261160/6	«Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի սպասարկում Համակարգերի հակիրճ նկարագիրը՝ 1. .«Գանձապետարանի գործառնական օր» (LS Finance online գործարքների և LS Finance Rep հաշվետվությունների տվյալների միացյալ հենքեր) համակարգը նախատեսված է գանձապետական միասնական հաշվի վարման, դրա ներքո գործող հաշիվների վարման, գանձապետական բոլոր գործարքների իրականացման, հաշվետվությունների ձևավորման, ներկայացման և ընդունման, ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով փոխանցումների և վճարումների իրականացման, տվյալների հավաքագրման և պահման, սխալների բացահայտման, գանձապետարանի կողմից իրականացվող նախնական հսկողության ապահովման, հաշիվների քաղվածքների, տեղեկությունների և	դրամ	290,000,000	1	ք. Երևան, Մելիք-Ադամյան 1	Ծառայությունների մատուցումն իրականացվում է մինչև 12.02.2025-30.12.2025թ.

		հաշվետվությունների ձևավորման, բյուջետայինն դասակարգումներին համապատասխան բյուջեների հաշվառման, ինչպես նաև վերը թվարկված գործառույթներին առնչվող այլ գործիքների կիրառման և գանձապետարանի աշխատանքը բնականոն ապահովելու համար: 2.Փոխգործելիությունը- «Քլիենթ-Թրեժրի» համակարգ, ՀՀ ՖՆ կայքէջի Ինտերակտիվ բյուջե համակարգ, ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգ, e_payment, pos_e_payment պետական վճարումների էլեկտրոնային, գնումների էլեկտրոնային համակարգ, LSBUDGET ՀՀ ՖՆ բյուջետային բլոկի բյուջեի ձևավորման համակարգ, ՀՀ ՊԵԿ-ի տեղեկատվական համակարգ, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի համակարգ: 3. «Քլիենթ-Թրեժրի» համակարգը նախատեսված է հաշիվների կարգադրիչների կողմից գանձապետական հաշիվների առցանց /ժամանակի իրական ռեժիմով/ էլեկտրոնային եղանակով կառավարելու համար, գանձապետարանի կողմից իրականացվող նախնական հսկողության ապահովման, հաշիվների քաղվածքների, տեղեկանքների և այլ հաշվետվությունների ձևավորման և նմանատիպ այլ գործիքներ կիրառելու համար:*					

*Պահանջ 1

«Գանձապետարանի գործառնական օր» (գործարքների և հաշվետվությունների տվյալների միացյալ հենքերի) գործող մոդուլներում ծրագրային փոփոխություններ, նոր հաշվետվությունների ձևերի, գործող հաշվետվությունների փոփոխությունների իրականացում:

«Փոփոխություններ «Գանձապետարանի գործառնական օր» համակարգից «LSBUDGET» համակարգ՝ կապված ՀՀ Կառավարության որոշումների (նույն թվում՝ ՀՀ Կառավարության որոշումներով վերաբաշխմանը և փոփոխմանը առնչվող որոշման նախագծերի քննարկման փուլում՝ ծախսային միջոցառումներով նվազեցվող գումարների ժամանակավոր պահուստավորում) և ծանուցագրերի հետ, սխալ կատարված գործարքների հայտնաբերում, ուսումնասիրում և շտկման խորհրդատվություն: Բացակայող դասակարգումների ավելացում համայնքային բյուջեի տեղեկատուի մեջ:»

Սխալ միավորված Համայնքների վերականգնում, Նախարարությունների միավորման ծրագրային կարգավորումներ «Գանձապետարանի գործառնական օր» (Փոխկապակցման տեղեկատու):

Բյուջետային համակարգից սխալ եկած դասակարգումների ուղղում կամ հեռացում:

Համայնքների հաշվետվության անհամապատասխանության հայտնաբերում, ուղղումների ուսումնասիրում և սխալների շտկման խորհրդատվություն:

Տարվա վերջ բոլոր գործող webservice-ների ծրագրային փակում և տարվա սկիզբ բացում:

ՀՀ ՊԵԿ ՀՎՀՀ ֆայլերի ներմուծում կապի բացակության կամ ֆայլի ոչ լիարժեք լինելու պատճառով:

Ծրագրային ցանկացած փոփոխության վերաբերյալ ուղեցույցի տրամադրում:

Պահանջ 2

«Քլիենթ-Թրեժրի» համակարգում ծրագրային փոփոխություններ՝ կապված ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ի, ԾԻԳ-ի, պետական և տեղական մարմինների, նոտարների աշխատանքների փոփոխությունների հետ, նոր հաշվետվությունների ձևերի,գործող հաշվետվությունների փոփոխությունների իրականացում: Ծրագրային ցանկացած փոփոխության վերաբերյալ ուղեցույցի տրամադրում

«Քլիենթ-Թրեժրի» համակարգի օգտվողների տարվա վերջ ծրագրային փակում և տարվա սկիզբ ծրագրային բացում:

«Քլիենթ-Թրեժրի» համակարգում յուրաքանչյուր ամսվա վերջի օրը 511՝ Ծանուցագրի ներմուծում գործարքի ծրագրային փակում և ամսվա առաջին օրը բացում:

«Քլիենթ-Թրեժրի» համակարգի օգտվողների կողմից սխալ կատարված գործարքների հայտնաբերում, ուսումնասիրում և շտկման խորհրդատվություն ՀՀ Ֆինանսների նախարարության Գործառնական, Բյուջեների կատարման հաշվետվությունների,Ծախսերի ֆինանսավորման վարչությունների պետերին, բաժինների պետերին և փոխարինողներին, ինչպես նաև BankMail համակարգի ադմինիստրատորին:

«Քլիենթ-Թրեժրի» համակարգում՝ ՀՀ Ֆինանսների նախարարության Գործառնական, Բյուջեների կատարման հաշվետվությունների,Ծախսերի ֆինանսավորման վարչությունների պետերի, բաժինների պետերի և փոխարինողների, ինչպես նաև BankMail համակարգի ադմինիստրատորի կողմից բարձրաձայնված հարցերի պատասխանում հեռախոսազանգով , Jira համակարգով:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգից եկած սխալների ուսումնասիրում հաշիվ-ապրանքագրերում՝ անհրաժեշտության դեպքում ծրագրային փոփոխությամբ:

Պահանջ 3

Հաշվետվությունների համակարգերում ծրագրային փոփոխություններ և 4300 հաշվետվության կարգավորում, եթե սխալ են ներմուծել որոշումը:

Բյուջետային համակարգից եկած սխալների ուղղման խորհրդատվություն,գործող մոդուլների, հաշվետվությունների փոփոխություններ և նոր հաշվետվությունների ձևավորում:

Տարվա սկզբին նախորդ տարվա վերջի հիմնական միջոցների և նյութական արժեքների, դեբիտոր կրեդիտոր տվյալների տեղափոխում, ընթացքում փոփոխված դասակարգումների ավելացում:

Սխալ ներմուծված արդյունքային ցուցանիշների հեռացում, ավելացում հաստատված բյուջեում, անհրաժեշտության դեպքում ուղղումներ:

Նախարարությունների միավորման ծրագրային կարգավորումներ Հաշվետվությունների համակարգի մոդուլներում (Հաշվեկշիռ, Հիմնական միջոց, Նյութական արժեք, Արդյունքային ցուցանիշ):

Ծրագրային ցանկացած փոփոխության վերաբերյալ ուղեցույցի տրամադրում

Դեկտեմբեր ամսվա արտաբյուջեի տվյալների ժամանակավոր տեղափոխում մինչև տարեկան արտաբյուջեի հաստատելը:

Պահանջ 4

Գործող Webservice համակարգերի խորհրդատվություն անհրաժեշտության դեպքում:

Պահանջ 5

Oracle խորհրդատվություն-LSONLINE ծրագրի խափանման վերացում՝ բազայում տեղ չլինելու հետ կապված և LSONLINE համակարգից LSREP2 համակարգի թարմացման վերականգնում անհրաժեշտության դեպքում:

Պահանջ 6

ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջի Ինտերակտիվ բյուջե համակարգի անխափան աշխատանքի ապահովում:

Պահանջ 7

ԵԱՏՄ մասին պայմանագրի մասով՝ «Գանձապետարանի գործառնական օր» համակարգի անխափան աշխատանքի ապահովում, գործող մոդուլների և հաշվետվությունների փոփոխություն, նոր հաշվետվությունների ձևավորում:

Պահանջ 8

Վերոհիշյալ համակարգերը հիմնված են Oracle 11 տվյալների հենքի վրա, որպես ծրագրավորման լեզու կիրառվում է C++Builder 6-ը:

Պահանջ 9

«Գանձապետարանի գործառնական օր» համակարգում կիրառվող տվյալների շտեմարանների կառավարում, ծրագրային ապահովման տեղադրում, մշտադիտարկում, սպասարկում, ինչպես նաև վերջիններիս հետագա զարգացման (further development) ապահովում:

Տվյալների շտեմարանների կարգավորումների (configuration), ինչպես նաև «Գանձապետարանի գործառնական օր» համակարգի ֆայլերի պահպանման համակարգերի (file storage) արխիվացում և պահեստային կրկնօրինակում:

«Գանձապետարանի գործառնական օր» համակարգում պարունակող տեղեկատվության մոնիտորինգ, ամբողջականության և անվտանգության ապահովում:

Պահանջ 10
Կատարողը ոչ ուշ քան փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջադրանքը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օրը Պատվիրատուին պետք է ներկայացնի համակարգի փոփոխության տեխնիկական առաջադրանքը՝ պատվիրատուի հետ համաձայնեցված, որի մեջ կներառվի փոփոխվող ենթահամակարգի ֆունկցիոնալ նկարագրություն:
Պահանջ 11
Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն Կատարողի թեստային միջավայրում Կատարողի կողմից, որից հետո տեղայնացվեն Պատվիրատուի թեստային միջավայրում: Պատվիրատուի կողմից վերջնական թեստավորումից հետո ծրագրային ապահովման թեստավորված մասը կտեղափոխվի Պատվիրատուի թողարկման սերվեր (production server):
Ոչ ուշ քան փոփոխությունը կատարելու օրվանից հաշված հետո 20 օրացուցային օրը Կատարողի կողմից պետք է ներկայացվի պահանջների ամբողջ փաթեթի ողջ ֆունկցիոնալությունն ապահովող համակարգի տարբերակը: Ամբողջությունը ենթադրում է առանց բլոկավորող կամ կրիտիկական սխալների առկայության աշխատող համակարգի տարբերակին հասանելիություն Պատվիրատուի կողմից փորձարկման համար: Պատվիրատուի կողմից հաստատում ստանալուց հետո այն պետք է ներդրվի իրական միջավայրում և տեղայնացվի բոլոր աշխատատեղերում:
Պահանջ 12
Համակարգի յուրաքանչյուր գործառույթի թեստավորման համար պետք է կազմվի համապատասխան թեստավորման պլան, որը կսահմանի թեստավորման քայլերի և գործողությունների հաջորդականությունը՝ ըստ համակարգի կիրառման դեպքերի և սցենարների:
Պահանջ 13
Համակարգի ընդունման թեստավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն Կատարողի՝ առաջադրանքների, սխալների, բարելավումների առաջադրման և դրանց կատարման ընթացքին հետևելու համար նախատեսված համակարգում (օրինակ՝ Jira, RedMine, OpenProject կամ նմանատիպ այլ համակարգ), որին մուտք պետք է տրամադրվի Պատվիրատուի համապատասխան աշխատակիցներին: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket), որը կներառի խնդրի/թերության մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին):
Պահանջ 14

Համակարգի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևյալը՝

Թեստի տեսակ	Նպատակ
Կոդի թեստավորում Code testing	Իրականացվում է ծրագրավորման ինժեներների կողմից ծրագրային միավորի իրականացման ժամանակ:

Թեստավորման ընթացքում ստուգվում է փոփոխվող մասը, իր գործառույթներով, սխալների առկայությունը:

Պահանջ 15
Ցանկացած գործառույթի փոփոխման դեպքում փոփոխության պետք է ենթարկվի նաև համապատասխան թեստավորման պլանը՝ վերաթեստավորում կատարելու նպատակով:
Պահանջ 16

Համապատասխանությունը օրենսդրությանը՝ Համակարգի և սույն փաստաթղթի բաժիններում նշված իրավական ակտերին և նշված ոլորտը կարգավորող այլ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Պահանջ 17

Կատարողը պետք է առաջարկի այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համազոր են Պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող- տեխնոլոգիաներին (նկարագրել համակարգի ծրագրային լուծումները):

Պահանջ 18

Կատարողը համակարգի փոփոխությունների նախագծման, մշակման, զարգացման և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ:

Պահանջ 19

Համակարգը պետք է կարողանա ապահովել 24/7 ռեժիմով աշխատանք:

Համակարգի սարքին վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 99.3 (+,- 0.7%) տոկոսից ավել: Սա նշանակում է, որ համակարգի՝ տարեկան անսարք վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 2 օր (+,- 15) րոպեից պակաս:
Պահանջ 20, եթե պետք է քանակ, համաժամանակյա միացում Client-Treasury համակարգի երկու սերվերներին 500 օգտվող:
Պահանջ 21

Պատվիրատուի պահանջի դեպքում Կատարողը պարտավոր է ստորագրել սպասարկման գործընթացի մասին համաձայնագիր (SLA – Service Level Agreement)

Պահանջ 22

Մասնակիցը պետք է համապատասխանի ISO/IEC 27001, QMS 9001 չափանիշին և ներկայացնի համապատասխան հավաստագիր:

Պահանջ 23

1. Ապահովել տվյալների շտեմարաններում (թեստային և արտադրական) աուդիտի ակտիվացում բոլոր այն օգտատերերի համար, որոնք ունեն տվյալների շտեմարաններում ադմինիստրատորի լիազորություն (Administrator privileges), տրամադրելով օգտվողների ցանկը:
2. Ապահովել տվյալների շտեմարաններում (թեստային և արտադրական) sys և system օգտվողների աուդիտ:
3. Պատվիրատուին մինչև 01.07.2025թ. տրամադրել LSonline և LSrep տվյալների շտեմարաններում Oracle-ի system օգտվողին համարժեք օգտատեր միայն կարդալու հնարավորություններով, որը կարող է տեսնել շտեմարանում ցանկացած գործողություն և տվյալ:
4. Պատվիրատուին տրամադրել LSrep տվյալների շտեմարաններում Oracle-ի օգտատեր միայն կարդալու հնարավորություններով, որը կարող է տեսնել շտեմարանում ցանկացած տվյալ:

Պահանջ 24

Համաժամանակյա ակտիվ օգտվողների նվազագույնը շեմ սահմանված չէ, օգտվողների թիվը անսահմանափակ է: Համաժամանակյա հարցումների քանակը, որոնք պետք մշակվեն համակարգում նախագծված վեբ սերվիսների միջոցով և չազդեն համակարգի աշխատունակության վրա, սահմանվում է 1 րոպեում 900 ստացված և պատասխանված հարցում:

Պահանջ 25

Համակարգի կոնֆիգուրացիոն փոփոխությունները և թարմացումները պետք է հեշտորեն իրականացվեն և որևէ ազդեցություն չունենան համակարգի աշխատանքի վրա:

Պահանջ 26

Համակարգը պետք է լինի ընդլայնվող ֆունկցիոնալությամբ, վերազինված լինի աշխատունակության դինամիկ ընդլայնմամբ՝ Պատվիրատուի սերվերային ռեսուրսների օպտիմալ օգտագործման նպատակով:

Պահանջ 27

«Քլիենթ-Թրեժրի» սերվերային մակարդակում պետք է օգտագործվեն անվտանգության SSL, SSH ստանդարտ գաղտնագրության հաղորդակարգերը:

Պահանջ 28

Համակարգը պետք է իրականացնի տեղեկատվության և գործողությունների գրանցում (activity logging, error logging): Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, IP հասցեն, կատարողի ինքնությունը և այլն:

Պահանջ 29

«Քլիենթ-Թրեժրի» համակարգը պետք է ինքնաշխատ կերպով «արգելակի» օգտվողի աշխատաշրջանը՝ օգտվողի «անգործության» սահմանված ժամանակաշրջանից հետո՝ այդ մասին հաղորդագրություն ուղարկելով օգտվողին:

Պահանջ 30

Համակարգի տեղեկատվական անվտանգության ապահովման կանոնները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության «Կիբեռանվտանգության բազային պահանջները հաստատելու մասին» 424-Լ Գ որոշմամբ սահմանված հիմնարար սկզբունքներին:

Պահանջ 31

«Քլիենթ-Թրեժրի» համակարգը պետք է ապահովի OWASP TOP 10 կողմից նկարագրված խոցելիություններից պաշտպանված լինելը:

Պահանջ 32

Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները պետք է լինեն հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար:

Պահանջ 33

Համակարգը պետք է ապահովի օգտվողի հեշտ և հարմար տեղաշարժը տարբեր մոդուլների միջև:

Պահանջ 34

Համակարգի տեղակայման/թարմացման գործընթացը պետք է դյուրին լինի վերջնական օգտվողների համար:

Պահանջ 35

Համակարգը պետք է ունենա որոնման արդյունավետ մեխանիզմ: Պետք է հնարավոր լինի իրականացնել որոնում և զտում ըստ տվյալային տարրի կամ դրա համակցության:

Պահանջ 36

Համակարգի միջերեսները պետք է լինեն եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Պահանջ 37

Կատարողի տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:
Թերության բացահայտման դեպքում Պատվիրատուն վերը նշված՝ Կատարողի հատուկ համակարգում՝ էլեկտրոնային թերթիկի (ticket) միջոցով պետք է ծանուցի Կատարողին այդ մասին՝ ներկայացնելով թերության նկարագրությունը՝ առկա ողջ փաստարկներով, որը Կատարողը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ուսումնասիրի և էլեկտրոնային թերթիկի (ticket) միջոցով ներկայացնի հիմնավորված առաջարկ թերության վերացման եղանակի և իրականացման ողջամիտ ժամկետի վերաբերյալ:

Պահանջ 38

Համակարգի փոփոխության ընդունման թեստի արդյունքները դասակարգվելու են հետևյալ սկզբունքով.

Արգելափակող (Blocker)	Արգելափակող սխալ, որը բերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառույթների հետ հետագա աշխատանքը անհնար է դառնում:
Կրիտիկական (Critical)	Կրիտիկական սխալ, որի արդյունքում համակարգի բիզնես տրամաբանությունը սխալ է, առկա է անվտանգության խնդիր, առաջանում է սերվերի խափանում և այլն:
Հիմնարար/ կարևոր (Major)	Բիզնես տրամաբանության հիմնական մասը ճիշտ չէ աշխատում, թերությունը կրիտիկական չէ, հնարավոր է շարունակել աշխատանքը թեստավորվող համակարգի հետ:

Աննշան (Minor)	Աննշան սխալ, որը չի խախտում թեստավորվող հատվածի բիզնես տրամաբանությունը, օգտվողի միջերեսի ակնհայտ խնդիր:
Չնչին (Trivial)	Չնչին խնդիր, որը չի վերաբերում բիզնես տրամաբանությանը, վատ վերարտադրվող սխալ, որը օգտվողի միջերեսից հիմնականում տեսանելի չէ, երրորդ կողմի գրադարանների, ծառայությունների հետ կապված խնդիր, որը չունի որևէ ազդեցություն համակարգի ընդհանուր որակի վրա:

Պահանջ 39

Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգի փոփոխությունները չեն ընդունվելու պատվիրատուի կողմից

- Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն,
- Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն,
- Հիմնարար/կարևոր (Major) 2 և ավելի սխալի առկակություն, կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 4 և ավելի աննշան (Minor) սխալի առկայություն, կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 7 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
- Աննշան (Minor) 5 և ավելի սխալի առյակություն կամ 4 աննշան (Minor) և 5 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
- Չնչին (Trivial) 10 և ավելի սխալի առյակություն

Իրական միջավայրում թարմացման արդյունքում այլ համակարգում կամ նույն համակարգի այլ գործառույթում և (կամ) հատկանիշում սխալի առկայություն:

Պահանջ 40

Կատարողը սերտ համագործակցելու է Պատվիրատուի հետ:

Պահանջ 41

Կատարողը պարտավոր է աջակցել Պատվիրատուին՝ ստուգելու մատուցվող ծառայության ընթացքը և որակը:

Պահանջ 42

Կատարողը պետք է ներկայացնի վերջնական հաշվետվություն Պատվիրատուին:

Պահանջ 43

Հաշվետվությունները պետք է տրամադրվեն էլեկտրոնային տարբերակով:

Լրացուցիչ պայմաններ՝

1. «Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի սկզբնական տարբերակի, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ փոփոխությունների ներդրման դեպքում, բայց ոչ ուշ քան յուրաքանչյուր տարին մեկ անգամ, Կատարողը իր տարածքում Պատվիրատուի ներկայացուցիչների ներկայությամբ ձևավորում և Պատվիրատուին է հանձնում «Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի ծրագրային ապահովման ելքային կոդերը բաց վիճակում՝ փակ կնքված փաթեթով:

   Փաթեթի հանձնում-ընդունումը իրականացվում է համապատասխան ակտի կազմման միջոցով: Կատարողը ցանկացած ժամանակ կարող է ստուգել փաթեթի և կնիքի ամբողջականությունը:
2. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը, որի վերաբերյալ կնքվում է պայմանագիր:
3. Կատարողը տրամադրում է համակարգ (Project management software), որը հնարավորություն կընձեռի պատվիրատուին առցանց եղանակով ձևակերպել առաջադրանքներ և հետևել դրանց կատարման ողջ ընթացքին:
4. Կատարողը պարտավորվում է սպասարկել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական, բյուջեների կատարման հաշվետվությունների,ծախսերի ֆինանսավորման վարչությունների պետերի, բաժինների պետերի և փոխարինողների, ինչպես նաև BankMail համակարգի ադմինիստրատորի կողմից

բարձրաձայնված հարցերը՝ հեռախոսազանգերով, Jira համակարգով, ինչպես նաև ժամանակի 24/7 ռեժիմով հասանելիություն ապահովել ֆոնդ-մասնաճյուղային հարաբերություններում:

5. Կատարողը պարտավորվում է համակարգերի ծրագրային անհասանելիության դեպքում՝ արձագանքել խնդրի վերաբերյալ տեղեկանալուց առնվազն մեկ ժամվա ընթացքում և խնդրի վերացման ուղղությամբ անընդհատ իրականացնել աշխատանքներ, անկախ աշխատանքային օրից և ժամից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ 900011017192 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ ք. Երևան, Բուզանդի փ. 1/3 շենք,7-րդ հարկ ՀՎՀՀ 01202055 «Յունիբանկ» ԲԲԸ Հ/Հ 24100023278500 տնօրեն՝
----------Ա. Եսայան (ստորագրություն) Կ.Տ.	----------Լ. Լալայան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
05.03. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլան ովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/6	2025թ ընթացքում «Գանձապետարանի գործառնական օր» և «Քլիենթ-Թրեժրի» համակարգերի սպասարկման ծառայություններ			14,500,000	43,500,000	72,500,000	101,500,000	130,500,000	159,500,000	188,500,000	217,500,000	246,500,000	290,000,000	290,000,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017192
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

----------Ա. Եսայան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Բուզանդի փ. 1/3
շենք,7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100023278500
տնօրեն՝

----------Լ. Լալայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
03.03. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ---------- 20թ. Դուրս գրված N ---------- հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարում է հետևյալ ապրանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
03.03.2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն